

Հավելված N 3
 ՀՀ կառավարության 2018 թվականի
 հունվարի 18-ի N 133 - Ն որոշման

«Հավելված N 5
 ՀՀ կառավարության
 2015 թվականի սեպտեմբերի
 25-ի N 1141-Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՉԵՂՈՔԱՑՄԱՆԸ ԵՎ
 (ԿԱՄ) ՆՎԱՋԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

	Կոռուպցիոն ռիսկ	Խնդրի նկարագրություն	Ռիսկի չեզոքացմանը և (կամ) նվազեցմանն ուղղված միջոցառում	Միջոցառման իրականացման ժամանակահատված	Միջոցառումն իրականացնող մարմին	Ֆինանսավորման աղբյուր
--	------------------------	-----------------------------	--	--	---------------------------------------	------------------------------

1	<p>Բժշկական ծառայությունների մատուցման որակի¹ նորմատիվային դաշտի բացակայություն (Օր.¹ ոչ անհրաժեշտ կամ հին մեթոդներով հետազոտությունների նշանակում, սահմանված նորմերին չբավարարող սարքավորումների կիրառում, որի արդյունքներն այլ բուժհաստատություններում չի ճանաչվում և այլն)</p>	<p>Հիվանդի բուժման գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է լինում կատարել մի շարք հետազոտություններ: Հետազոտությունների իրականացումը պետք է կատարվի որոշակի նորմատիվային հիմքի վրա, որոնք սակայն սահմանված չեն: Այդ առումով վճարում կատարող անձանց համար անհասկանալի է դառնում պահանջվող հետազոտություններն անհրաժեշտ էին, թե ոչ, այլ բուժհաստատությունում բուժումը շարունակելու դեպքում արդեն իսկ կատարված հետազոտության արդյունքները պետք է ճանաչվեին, թե ոչ: Մի շարք խնդիրներ առաջանում են նաև ներկայումս գործող էլեկտրոնային առողջապահության հնարավորությունների ոչ լիարժեք օգտագործման հետևանքով: Օր.¹ հետազոտությունների էլ. ֆայլերը (նկարները) հիվանդի ցանկությամբ հասանելի դարձնել այլ բուժհաստատության մասնագետների համար: Ամբուլատոր պոլիկլինիկական</p>	<p>1. Կլինիկական ուղեցույցերի և պացիենտի վարման գործելակարգերի ներդնում, մասնավորապես , թարգմանում, մշակում, տեղայնացում և ներդնում շուրջ 202 ուղեցույց, 225 գործելակարգ և 134 ընթացակարգ:</p> <p>2. Մշակված ուղեցույցերի, գործելակարգերի և ընթացակարգերի հիման վրա կազմել բուժհիմնարկների գործունեության համար պարտադիր ախտորոշիչ սարքավորումների հազեցվածության ցանկը, այն ներառել լիցենզավորման պայմաններում և առողջապահության տեսչության ստուգաթերթերում:</p> <p>3. Մշակել ժամանակացույց առկա իրավակարգավորումների հիման վրա բուժհաստատություններում սարքերի թարմացման վերաբերյալ և ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:</p> <p>4. Էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով լաբորատոր գործիքային հետազոտությունների իրականացման ընթացակարգի մշակում և հաստատում ՀՀ առողջապահության նախարարի հրամանով:</p> <p>5. Մշակել և կառավարության աշխատակազմ ներկայացնել էլեկտրոնային</p>	<p>2018 թ. դեկտեմբերի 10</p> <p>2018 թ. դեկտեմբերի 15</p> <p>2018թ. նոյեմբերի 15</p> <p>2018թ. սեպտեմբերի 15</p> <p>2018թ.</p>	<p>ՀՀ Առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ Առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ Առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ Առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ</p>	<p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուց</p>
---	---	---	--	--	---	--

¹ Հիվանդի բուժառայության մատուցման գործընթացում ծառայության որակը պայմանավորված է 5 բաղադրիչների առկայությամբ և այդ բաղադրիչներից յուրաքանչյուրի որակով: Այդ բաղադրիչներն են

a) Հիվանդի բուժման ընթացքում գտնվելու կեցավայրը

b) Հիվանդին հետազոտման գործընթացը

c) Հիվանդի բուժման ընթացքում ծառայություն մատուցող բուժանձնակազմի պատրաստվածությունը և պրոֆեսիոնալիզմը

d) Հիվանդի բուժման ընթացքում գործածվող բուժամիջոցների (դեղերի, բիոլոգիական ակտիվ նյութերի կամ այլ քիմիական միացությունների) օգտագործման գործընթացը

e) Բուժհիմնարկում գտնվելիս հիվանդի խնամքը

		<p>հաստատություններից հիվանդին սխալ և/կամ թերի օգնություններով ստացիոնար բուժման անհիմն ուղեգրմամբ, և/կամ հակառակը՝ ուշացած, անարդյունավետ ամբուլատոր բուժումներից հետո բարդացած դեպքերով ուղեգրումներ:</p>	<p>առողջապահության համակարգը լրացուցիչ սերվերներով վերազինելու միջոցառումների ծրագիրն ու դրա ֆինանսական գնահատումը, անհրաժեշտ գնահատումներով, որով հնարավոր կլինի հիվանդի հետազոտման արդյունք հանդիսացող զանազան էլ. ֆայլերի և պատկերների ներբեռնումն ու պահումը համակարգում:</p> <p>6. Մշակել և կառավարության աշխատակազմ ներկայացնել կառավարության որոշման նախագիծ,</p> <p>1) որը կկարգավորի պետության մասնակցությամբ առողջապահական կազմակերպությունների և այլ սարքերով ապահովման ընթացակարգը,</p> <p>2) այդ իրավական ակտում պետք է սահմանվի, որ յուրաքանչյուր տարվա նոր սարքավորումներով (այդ թվում նաև տարբեր անհատներից և կազմակերպություններից Հայաստանին որպես նվիրատվություն հատկացրած) հագեցված բուժհաստատությունների ցանկը, ինչպես նաև յուրաքանչյուր բուժհաստատությանը տրված սարքերի ցանկը պետք է գետեղվի Առողջապահության նախարարության վեբ կայքում մինչև հաջորդող տարվա հունվարի 20:</p> <p>7. Մշակել և ներդնել կլինիկական-լաբորատոր հետազոտման արդյունքների գնահատման ցուցիչների մեկ միասնական համակարգ:</p> <p>8. Բժշկական օգնության մշտադիտարկման, որակի կառավարման համակարգերի ներդնում և զարգացում, այդ թվում՝ ԱԱՊ-ի և հիվանդանոցային ծառայությունների որակական ցուցանիշների, ազգային մակարդակում ծառայությունների գնահատման որակական և քանակական ցուցանիշների ներդնում և հաստատում ՀՀ առողջապահության նախարարի հրամանով:</p> <p>9. Էլեկտրոնային առողջապահության համակարգում ստեղծել համապատասխան դարան և հարցաշար, որտեղ դուրս գրվող հիվանդների համար կնախատեսվի տրամադրվող բուժսպասարկումից և բուժող բժշկից բավարարվածության ստուգման օբյեկտիվ մեխանիզմներ (գաղտնի և անանուն գնահատում-(feedback):</p> <p>10. Կլինիկական ուղեցույցերի և պացիենտի վարման գործելակարգերի ներդրմամբ մշակել</p>	<p>դեկտեմբերի 30</p> <p>2018թ. մայիսի 30</p> <p>2018թ. օգոստոսի 20</p> <p>2018թ. հուլիսի 10</p> <p>2018թ. հունիսի 30</p> <p>2018 թ.</p>	<p>Առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ Առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ Առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ Առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ Առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ</p>	<p>իջ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուց</p>
--	--	---	---	---	---	--

			տարբեր հիվանդությունների համար հստակ կանոնակարգեր և ինդիկատորներ (ցուցիչներ), որոնք կհավաստեն հոսպիտալացման անհրաժեշտությունը:	դեկտեմբերի 20	Առողջապահության նախարարություն	իջ ֆինանսավորման կարիք չկա
2	Բժշկական ծառայությունների մատուցման ընթացքում կոռուպցիոն ռիսկեր առաջանում են դեղերի շրջանառության տարբեր փուլերում:	Հիվանդանոցում երբեմն կիրառում են դեղեր, որոնց անհրաժեշտ քանակի ապահովածության բացակայության պատճառով հնարավոր չի լինում դրանցով հիվանդին ապահովել բուժման ողջ ընթացքում, որը հանգեցնում է դեղերի իրացման ոչ թափանցիկ և ոչ օրինական գործընթացներում բուժանձնակազմի ներգրավմանը: Շատ դեպքերում առաջարկվում է, որպեսզի դեղերը ձեռ բերի հիվանդը, այն դեպքում, երբ այն բուժհիմնարկի պարտականությունն է և ծառայության գինը ներառում է նաև պահանջվող դեղերի գինը (այդ թվում նաև պետական ծրագրերի շրջանակներում): Բուժման ընթացքում օգտագործված դեղերի տեսականին, քանակը և գինը պետք է հասանելի լինի հիվանդի համար, որը կբացառի դեղերի հավելագրումները:	<p>1. Կլինիկական ուղեցույցերի և պացիենտի վարման գործելակարգերի ներդրմամբ վերանայել և թարմացնել ՀՀ ԱՆ 14.05.2013թ թիվ 17-Ն հրամանով հաստատված հիմնական դեղերի ցանկը, նրանում ներառելով նաև մի շարք նոր ծառայություններում կիրառվող դեղերը (օրինակ մանկական և մեծահասակների պալիատիվ բուժօգնության մեջ գործածվող):</p> <p>2. Պետական պատվերի միջոցների հաշվին ձեռք բերվող դեղերի, քիմիական նյութերի, բժշկական սարքերի և պարագանների գնման գործընթացների կենտրոնացված համակարգի երկու փուլով ներդնում՝ համապատասխան փոփոխությունների իրականացում իրավական ակտերում՝ ՀՀ առողջապահության նախարարի հրամանի ընդունում, պետական պատվերի տեղադրման պայմանագրում փոփոխության իրականացում:</p> <p>3. Մշակել մեխանիզմներ, որով բժիշկը հնարավորություն կունենա on-line ռեժիմով տեղեկանալու բուժհիմնարկում առկա դեղերի (առողջարանային-վերականգնողական կենտրոններում նաև ակտիվ ֆիզիկական կամ քիմիական բիոնյութերը) մասին, կարողանա նշանակել և հիվանդին հասցնել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունում առկա իր նախընտրած դեղերը, հիվանդի պահանջի դեպքում կարողանա տրամադրել տեղեկատվություն (այդ թվում՝ գրավոր) օգտագործված դեղերի տեսականու, քանակի և յուրաքանչյուրի գնի մասին՝ առանց բուժհիմնարկի ադմինիստրացիայի միջամտության:</p> <p>4. Արգելել բժիշկների կողմից չգրանցված դեղեր առաջարկելու հնարավորությունը՝ օրենքով: Ուսումնասիրել քրեական պատասխանատվություն նախատեսելու նպատակահարմարությունը և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել</p>	<p>2018 թ. դեկտեմբերի 15</p> <p>2018թ. նոյեմբերի 20</p> <p>2018թ. դեկտեմբերի 30</p> <p>2018թ. հոկտեմբերի 30</p>	<p>ՀՀ Առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ Առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ Առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ Առողջապահության</p>	<p>Լրացուց իջ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուց իջ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուց իջ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուց իջ</p>

			առաջարկություններ:			
			5. Մեկնարկել ՀՀ-ում լիցենզավորված բժշկական հաստատությունների, դեղատների և ապահովագրական ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների ու դեղերի հատկացման մասին գրանցումներն էլեկտրոնային առողջապահական համակարգում: Ապահովել գրանցումների փաստացի իրականացման մեկնարկը:	2018 մայիսի 10	ՀՀ Առողջապահության նախարարություն	Ֆինանսավորման կարիք չկա Լրացուցիչ Ֆինանսավորման կարիք չկա
3.	Բուժօգնության տրամադրման փուլերից մեկը հիվանդանոցային խնամքի ծառայություններն են, որը ՀՀ-ում անհրաժեշտ չափով կանոնակարգված չէ, այդ թվում նաև մասնագետներին ներկայացվող կրթական և որակավորման չափանիշների մասով:	Հիվանդը բուժման գործընթացում պետք է օգտվի որոշակի խնամքի ծառայությունից: Դրանք պետք է բավարարեն որոշակի նորմերի: Առողջապահության տարբեր մասնագիտացված ոլորտների համար հիվանդանոցային խնամքի ուղեցույցների բացակայությունը հանգեցնում է իրավիճակի, երբ թե պետությունը, անվճար պետական ծրագրերի մասով, թե մասնավոր հատվածը վճարում են ծառայությունների համար, որոնց ստացումը վերահսկելի չէ իրենց կողմից:	1. Հիվանդանոցային հատուկ խնամք իրականացնող բուժանձնակազմին ներկայացվող պահանջների վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն և ծրագրի ներդրման նպատակով առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ: 2. Լիցենզավորման գործող ընթացակարգերում կատարել համապատասխան փոփոխություն, որով կպահանջվի այսպիսի մասնագետների առկայությունը մի շարք մասնագիտացված բուժհաստատություններում կամ առանձին տեսակի բժշկական ծառայությունների մատուցման համար: 3. ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ ուսումնական հաստատություններում հատուկ խնամք իրականացնողների մասնագիտության կրթական ծրագրի վերանայում, թարմացում և նոր առաջարկությունների ներկայացում: 4. Հիվանդանոցային հատուկ խնամքի ծառայությունների մատուցման ուղեցույցների և/կամ չափորոշիչների մշակում ըստ հիվանդությունների (հիվանդությունների խմբերի)՝ անհրաժեշտության դեպքում նախաձեռնելով օրենսդրական փոփոխություններ:	2018 հուլիսի 10 2018 դեկտեմբերի 10 2018 դեկտեմբերի 10 2018 թ. դեկտեմբերի 20	ՀՀ Առողջապահության նախարարություն ՀՀ Առողջապահության նախարարություն ՀՀ Առողջապահության նախարարություն ՀՀ Առողջապահության նախարարություն	Լրացուցիչ Ֆինանսավորման կարիք չկա Լրացուցիչ Ֆինանսավորման կարիք չկա Լրացուցիչ Ֆինանսավորման կարիք չկա Լրացուցիչ Ֆինանսավորման կարիք չկա

						չկա
4	<p>Մատուցվող բուժօգնության ծառայությունների արժեքը պետք է լինի տնտեսապես հիմնավորված:</p>	<p>Հիվանդի բուժման գործընթացը ենթադրում է որոշակի ֆինանսների առկայություն, որոնց ոչ կատարյալ հաշվարկի և անարդյունավետ ծախսելու հետևանքով առաջանում են կոռուպցիոն ռիսկեր՝ պայմանավորված ծառայությունների արժեքը հաշվելու ոչ ճիշտ տնտեսական չափորոշիչներով, ֆինանսավորման սկզբունքների անկատարությամբ:</p> <p>Նմանատիպ բացթողումները կարող են հանգեցնել ոչ արդյունավետ ֆինանսական ծախսերի և կոռուպցիոն ռիսկերի (օր.՝ սպասարկվող բնակչության թվաքանակի արհեստականորեն ուռճացմամբ): Լրացուցիչ քննարկման և հիմնավորման կարիք ունի պետության կողմից ձեռք բերվող ծառայությունների գների տարբերությունները մարզերում և Երևանում, նաև միևնույն բնակավայրի տարբեր բուժհաստատություններում:</p>	<p>1. Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների հաշվարկման միջազգային փորձի ուսումնասիրում առնվազն ութ երկրում, որից առնվազն չորսը ԵՄ երկրներից:</p> <p>2. Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների (այդ թվում ծննդօգնության) գների հաշվարկման նոր մեթոդաբանության, հիմնված բժշկատնտեսագիտական ստանդարտների, շուկայական առողջ մրցակցության և ուսումնասիրված միջազգային փորձի վրա, մշակում ու ներդնում համապատասխան իրավական ակտով:</p> <p>3. Բնակչության անապահով ու առանձին (հատուկ) խմբերի որոշ կատեգորիաների նկատմամբ կիրառել նաև համավճարի սկզբունքը՝ հիմքում դնելով անապահովության ցուցանիշը (Օրինակ՝ բուժծառայության անվճար լինելը սահմանել բաղդատված ձևով, կախված հիվանդի ընտանեկան եկամուտներից, մեկի համար սահմանելով 100 տոկոսանոց փոխհատուցում, մյուսի համար 40 տոկոս և այլն):</p> <p>4. Վերանայել «պատրոնաժ այց», հասկացությունը, սահմանել դրա անհրաժեշտության պայմանները, այցերի քանակը, սահմանել այդ ընթացքում մատուցվող ծառայությունների չափորոշիչները:</p>	<p>2018թ. մայիսի 10</p> <p>2018թ. սեպտեմբերի 30</p> <p>2018թ. ապրիլ 10</p> <p>2018թ. մայիսի 10</p>	<p>«Առողջապահության նախարարություն»</p> <p>«Առողջապահության նախարարություն»</p> <p>«Առողջապահության նախարարություն»</p> <p>«Առողջապահության նախարարություն»</p>	<p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p>
5	<p>Որակյալ բուժօգնությունը «բոլոր մարզերում պետք է լինի հասանելի և մատչելի»: Այդ ծառայությունների մատուցումը թե օգտվողի, թե պետության համար պետք է լինի առավելագույն թափանցիկ:</p>	<p>Բոլոր զարգացած երկրներում վճարովի բուժծառայության առկայության դեպքում, այն ենթադրում է նաև ապահովագրական ընկերությունների առկայություն և առողջության ապահովագրության</p>	<p>1. Հայաստանում առողջության պարտադիր ապահովագրության հայեցակարգի մշակման նպատակով միջազգային փորձի ուսումնասիրություն առնվազն ութ երկրում, որից առնվազն չորսը ԵՄ երկրներից:</p> <p>2. «Կենտրոնական բանկի հետ համատեղ Հայաստանում առողջության պարտադիր</p>	<p>2018 թվականի հուլիսի 30</p> <p>2018</p>	<p>«Առողջապահության նախարարություն»</p> <p>«Առողջապահության նախարարություն»</p>	<p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p>

		<p>համակարգ: Դրա բացակայությունը բերում է բնակչության սովորական զանգվածի համար հիվանդանոցային բուժօգնության անմատչելիության: Այդ հանգամանքը ստիպում է բուժօգնության կարիք ունեցող անձանց որոնել ոչ օրինական ճանապարհներ ծառայություններից օգտվելու համար, իսկ բուժծառայությունների մատուցման ոլորտում բերում է սովերային ֆինանսական շրջանառության, որում ներգրավվում են թե՛ ծառայություն մատուցողը և թե՛ օգտվողը:</p>	<p>ապահովագրության հայեցակարգի և միջոցառումների ծրագրի մշակում, հիմնված միջազգային փորձի վրա: Հայեցակարգի ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ:</p> <p>3. Ներդնել պետության կողմից հատկացվող ֆինանսական միջոցների արդյունավետ ծախսման նպատակով բժշկական ծառայությունների գնման գործընթացում դեպքերի անհատական վարման (case management) ինստիտուտ, դրանում ներգրավելով անկախ կազմակերպությունների փորձագետների կամ ապահովագրական կազմակերպությունների կարողությունները:</p>	<p>նոյեմբերի 30</p> <p>2018 թվականի նոյեմբերի 20</p>	<p>առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ Առողջապահության նախարարություն</p>	<p>իջ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p>
6	<p>Բուժօգնության ծառայություններ մատուցելու գործընթացում ֆինանսական միջոցների շրջանառության ոչ բավարար թափանցիկություն :</p>	<p>Բուժօգնության ծառայություններ մատուցելու գործընթացում Ֆինանսական միջոցների շրջանառություն տեղի է ունենում տարբեր մակարդակներում: Այդ գործընթացում իրենց լիազորությունների շրջանակից կախված որոշումներ կայացնելու հնարավորություն ունեն թե՛ պետական ծառայողներ, թե՛ բուժհաստատության գործադիր մարմնի աշխատակիցներ (գերատեսչության կողմից բուժհիմնարկներին ֆինանսավորման փուլ և ներբուժիմնարկային փուլ): Այդ առումով որոշումների կայացման ոչ թափանցիկ ընթացակարգերի դեպքում մեծանում են կոռուպցիոն ռիսկերը (օր.՝ բուժհիմնարկի</p>	<p>1. Համակարգի թափանցիկությունն ապահովելու նպատակով առողջապահական կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների պարտադիր հրապարակման պահանջի ներդնում՝ համապատասխան իրավական ակտի ընդունմամբ:</p> <p>2. Առողջապահական կազմակերպություններում ֆինանսական հաշվետվողականության ՖՀՄՄ (IFRS) համակարգի ներդրում և մեկնարկում՝ համապատասխան իրավական ակտի ընդունմամբ:</p> <p>3. Պետպատվեր իրականցնող խոշոր բժշկական հաստատություններում պարտադիր տարեկան արտաքին աուդիտի անցկացման պահանջի ներդնում՝ համապատասխան իրավական ակտի ընդունմամբ:</p>	<p>2018 դեկտեմբերի 10</p> <p>2018 դեկտեմբերի 10</p> <p>2018 թվականի մայիսի 20</p>	<p>ՀՀ առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ Առողջապահության նախարարություն</p>	<p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p>

		տնօրենի կողմից ֆինանսական շարժերի միանձնյա կառավարման հնարավորություն, առանց հստակ հաշվետվողական մեխանիզմների):	<p>4. Ներքուժիմնարկային դրամաշրջանառության կատարելագործման և աշխատակազմի համար թափանցիկության ապահովման նպատակով՝</p> <p>1)Բուժհիմնարկներում տեղադրել գումարներ ընդունող ապարատներ, որոնք հնարավորություն կտան 24 ժամյա գրաֆիկով ընդունել բուժհիմնարկին փոխանցվող գումարները: Իստիվ արգելել ցանկացած կանխիկ դրամաշրջանառությունը բուժհիմնարկներում: Պատասխանատվություն սահմանել այն չկատարող հիմնարկի տնօրենի նկատմամբ:</p> <p>2)Սահմանել հիվանդանոցների ընդունարանում հնարավոր բուժօգնության տրամադրման շրջանակը և կանոնակարգել նման դեպքում ֆինասական հատուցումները իրականացման կարգը համապատասխան իրավական ակտի ընդունմամբ:</p> <p>5. Սահմանել ՀՀ կառավարության 04.03. 2004թ. թիվ 318-Ն որոշման 3-րդ հավելվածի 11-րդ կետով նախատեսված «տանձին դեպքերում» ձևակերպման հստակ չափանիշներ, որոնք դեպքում համավճարից ազատելու կամ համապատասխան զեղչված համավճար սահմանելու իրավասություն ունեցող բժշկական կազմակերպության կողմից ստեղծվող հանձնաժողովների գործունեությունը կդառնա ավելի օբյեկտիվ, և հանձնաժողովը կկայացնի իրավիճակին համապատասխան որոշում՝ ապահովելով այս հանձնաժողովի հասանելիությունն ու թափանցիկությունը:</p> <p>6. Ապահովել համավճարով մատուցվող ծառայությունների գնացուցակի տեղադրումը տվյալ բժշկական կազմակերպության մուտքի մոտ՝ տեսանելի վայրում, ինչպես նաև բժշկական կազմակերպությունների կայքերում:</p>	2018 թվականի ապրիլի 10	ՀՀ Առողջապահության նախարարություն	Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա
				2018 թվականի հունիսի 15	ՀՀ Առողջապահության նախարարություն	Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա
				2018 թվականի հունիսի 15	ՀՀ Առողջապահության նախարարություն	Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա
7	Բուժհիմնարկներում պետպատվերի տեղադրման գործընթացի ոչ բավարար կանոնակարգվածություն:	Պետական պատվերի տեղադրման գործընթացի ոչ թափանցիկ լինելը և ոչ կատարյալ մեխանիզմները հանգեցնում են պաշտոնատար անձանց կողմից որոշումների կայացման ընթացքում կոռուպցիոն ռիսկերի աճի:	<p>1.ՀՀ կառավարության 04.03. 2004թ. թիվ 318-Ն որոշման վերանայում, որով հնարավոր կլինի իրականացնել առողջապահության ֆինանսավորման և ֆինանսական վերահսկողության ոլորտում պետական բյուջետային միջոցների բաշխման նպատակային, արդյունավետ և թափանցիկ մեխանիզմների ապահովում:</p> <p>2. Նախարարության կայքէջում ստեղծելու պետական պատվերների հայտ ընդունելու համար հատուկ էլեկտրոնային դիմումաձևերի հնարավորություն և համակարգ, ինչպես նաև կենտրոնացված ձևաչափերի շտեմարան՝ ցանկացած ձևաթուղթ ներբեռնելու հնարավորությամբ: Կից տեղադրել պետական պատվերի տեղադրման հայտ ներկայացնելու մշակված ուղեցույց, որը դրված կլինի կայքէջում, և որում մանրամասն կներկայացվի հայտի ամեն մի տողի լրացման տարբերակները էլեկտրոնային ձևաչափը լրացնելիուց հետո, համակարգը ինքն ավտոմատ ձևով կհաստատի պետպատվերի ընդունման փաստը, դրանով իսկ մինիմումի հասցնելով</p>	2018 թվականի նոյեմբերի 20	ՀՀ առողջապահության նախարարություն	Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա
				2018 թվականի մայիսի 10	ՀՀ առողջապահության նախարարություն	Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա

		<p>մարդկային գործոնը:</p> <p>3.Պետական պատվերի շրջանակներում ծառայություն մատուցող կազմակերպությունների ցանկը և ստացված գումարի չափը դնել կայքէջում :</p> <p>4.Մշակել համապատասխան աշխատակարգ, համաձայն որի հայտատուի համաձայնությամբ հանձնախմբի որոշումները տեղակայել կայքէջում:</p> <p>5. Վերանայել և հիմնովին փոփոխության ենթարկել ՀՀ առողջապահության նախարարի 17 սեպտեմբերի 2015թ N 49-Ն հրամանի² մի շարք կետեր, մասնավորապես.</p> <p>1) Իրավական ակտից հանել պետական պատվերի տեղադրման նախապայմանների մեջ առկա ընդհանրական պահանջները, մասնավորապես, 2.6.2 կետով նշված նախապայմաններից է ,, հիմնական բժշկական մասնագիտական կադրերով ապահովվածությունը՝ ելնելով տվյալ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի պահանջներից, .: (Թե որ իրավական ակտերի ու պահանջների մասին է խոսքը, ոչինչ չի ասվում:) Հստակեցում մտցնել հրամանի եղած ցանկացած նախապայմանի, մասնավորապես 2.6.2 կետով նշված պահանջի համար՝ հստակ նշելով ամեն մի ոլորտի համար ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի պահանջները: Նաև 2.6.5 կետով նշված պահանջի համար, հստակ նշելով ծառայությունների գնագոյացման և համատարած հաշվառման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից սահմանված, որ չափանիշների, որ իրավակարգավորման մասին է խոսքը:</p> <p>2) Վերանայել և վերախմբագրել ՀՀ առողջապահության նախարարի 17 սեպտեմբերի 2015թ N 49-Ն հրամանի մեջ անհասկանալի կամ երկիմաստ ձևակերպում ունեցող 2.6.9 ենթակետը:</p> <p>3) Վերանայել և վերախմբագրել ՀՀ առողջապահության նախարարի 17 սեպտեմբերի 2015թ N 49-Ն հրամանի այն կետերը, որոնք միևնույն ծառայություն իրականացնող բայց տարբեր ենթակայությամբ բուժօգնությունների համար առաջարկում են տարբեր ընթացակարգեր: (մասնավորապես վերախմբագրել 3.15.6 ենթակետը):</p> <p>4) Բացառել կազմակերպությունների ազատ մրցակցության խոչընդոտները: (մասնավորապես վերանայել և վերախմբագրել ՀՀ առողջապահության նախարարի 17</p>	<p>2018 թվականի մարտի 30</p> <p>2018 թվականի դեկտեմբերի 10</p> <p>2018 թվականի դեկտեմբերի 10</p>	<p>ՀՀ առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ առողջապահության նախարարություն</p>	<p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p>
--	--	--	--	--	--

² Բուժօգնություններում պետական պատվերի տեղադրման գործընթացը կարգավորվում է ՀՀ առողջապահության նախարարի 17 սեպտեմբերի 2015թ N49-Ն ,,Բժշկական օգնության և սպասարկման պետական պատվերի տեղադրման կարգը և պետական պատվեր իրականացնող բժշկական կազմակերպությունների կառավարման արդյունավետության գնահատման սուցանիշները սահմանելու մասին,, հրաման, հավելված 6, 1.3 կետ <http://irtek.am/views/act.aspx?aid=83326&m=%27%27&sc=#> և <http://irtek.am/views/act.aspx?aid=83327&m=%27%27&sc=#>

			<p>սեպտեմբերի 2015թ N 49-Ն հրամանի հավելված 6-ի՝ „ՀՀ Առողջապահության նախարարության պետական պատվերի տեղադրման հանձնաժողովի աշխատակարգի, 14.3.6 կետը):</p> <p>5) Վերանայել և վերախմբագրել ՀՀ առողջապահության նախարարի 17 սեպտեմբերի 2015թ N 49-Ն հրամանի Հավելյալ թիվ 2-ը, „Պետական պատվեր իրականացնող բժշկական կազմակերպությունների կառավարման արդյունավետության գնահատման ցուցանիշները, մասնավորապես հստակեցնելով դրա 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ կետերի պահանջները:</p> <p>6. Վերանայել տարբեր ծառայություններ մատուցելու, այդ թվում նաև լաբորատոր-ախտորոշիչ հետազոտությունների համար առաջարկվող ցանկերը, վերացնելով դրա թերություններն ու անհամապատասխանությունը լիցենզավորման պահանջների կլինիկական բժշկության հասկացողություններին (Մասնավորապես Օնկոմարկերները դրանք իմունոլոգիական ռեագենտներ են և դրանով աշխատելու համար տրվում է իմունոլոգիական անալիզների լիցենզիա: Սակայն պետպատվեր իրականացնելու համար պահանջում են, որ լաբորատորիան ունենա ցիտոլոգիական հետազոտությունների լիցենզիա: Կամ հելիկոբակտերիաների առկայությունը որոշվում է իմունոլոգիական անալիզով, որը կոչվում է <i>Polymerase chain reaction</i> (PCR) մեթոդ և տրվում է իմունոլոգիական անալիզներ անցկացնելու լիցենզավորում: Սակայն պետական պատվերի ծառայությունն անցկացնելու համար պահանջում են, որ այն որոշելիս լաբորատորիան ունենա բակտերիոլոգիական անալիզներ անցկացնելու լիցենզիա (արտոնագիր):</p> <p>7. Միասնականացնել իրավական տարբեր ակտերում միևնույն ծառայության բնույթը և տեղակայել ծառայությունների և հետազոտությունների նույն դասիչում: (Մասնավորապես սրտային հիվանդությունների ժամանակ գործածվում է հետազոտման մի եղանակ, որը կոչվում է Խոլտեր հետազոտություն, որի ժամանակ 24 ժամյա անընդմեջ դիտարկվում է սրտի աշխատանքը: Այն անցկացնելու համար մի դեպքում պահանջում են որ լաբորատորիան ունենա կարդիոլոգիայի լիցենզիա, մյուս դեպքում որպես ֆունկցիոնալ հետազոտություն անցկացնելու լիցենզիա: (806³ հրամանում գրված է, որպես կլինիկական հետազոտում, իսկ ՀՀ կառավարության 04.03. 2004թ Թիվ 318-Ն որոշմամբ⁴ որպես ֆունկցիոնալ հետազոտում:</p> <p>8. Մշակել կանոնակարգ, համաձայն որի ֆինանսական փոխհատուցումը կատարվի ավտոմատացված ձևով (մարդկային գործոնը հասցնել մինիմումի): Փոխհատուցման ամեն</p>	<p>2018 թվականի հոկտեմբերի 30</p> <p>2018 թվականի նոյեմբերի 15</p> <p>2018 թվականի</p>	<p>ՀՀ առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ առողջապահության նախարարություն</p>	<p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուցիչ</p>
--	--	--	---	--	--	--

³ ՀՀ Կառավարության 25 հուլիսի, 2013 թ N 806-Ն „Սոցիալական փաթեթի շահառու հանդիսացող զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց, նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև փրկարար ծառայության ծառայողների և նրանց ընտանիքների անդամների, ժամկետային պարտադիր զինվորական ծառայության շարքային և կրտսեր ենթասպայական կազմի զինծառայողների համար պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության ու սպասարկման կազմակերպման և ֆինանսավորման, ինչպես նաև ՀՀ Կառավարության 2000թ օգոստոսի 28-ի N517 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին; որոշում <http://irtek.am/views/act.aspx?aid=71460&m=%27%27&sc=#> կամ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=85763>

⁴ ՀՀ կառավարության 04.03. 2004թ Թիվ 318-Ն որոշում <http://irtek.am/views/act.aspx?aid=24684&m=%27%27&sc=#>

ՀՀ Ա.Ն. 18.11.2013թ. թիվ 71-Ն հրաման, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=95207>

			մի մերժում պետք է տեղադրվի կայքէջում, հստակ պատճառաբանությամբ:	հուլիսի 15	ահույան նախարարություն	Ֆինանսավորման կարիք չկա
			9. Բուժփնտրումներին պետպատվերի ծառայությունների մատուցման պայմանագրում հստակ նշել, որ տարեկան հատկացված ֆինանսական ծավալներից ավելի կատարված ծառայությունները, տարեկան գերակատարումները, ենթակա չեն ֆինանսական (փոխհատուցման), բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի և իրավիճակների: Հստակ սահմանել գերակատարումների դեպքում ֆինանսական փոխհատուցման կարգը: Փոխհատուցված գումարների և կազմակերպությունների ցանկը հասանելի դարձնել հասարակությանն՝ ապահովելով հրապարակայնությունը, այն տեղադրելով առողջապահության վեբ կայքում:	2018 թվականի օգոստոսի 10	ՀՀ առողջապահության նախարարություն	ՀՀ առողջապահության նախարարություն
8.	Բուժօգնության ծառայություններ մատուցելու գործընթացում հիվանդների իրավունքների մասին իրազեկվածության ցածր մակարդակ:	Հիվանդների, որպես բուժօգնություն ստացող շահառուների, իրենց իրավունքների վերաբերյալ տեղեկացվածության ցածր մակարդակը հանգեցնում է կոռուպցիոն ռիսկերի:	1. Վերանայել ՀՀ կառավարության 04.03.2004թ. թիվ 318-Ն որոշմամբ սահմանված հերթագրման կարգը՝ ապահովելով հերթագրման հնարավորինս թափանցիկ եղանակ, որը կերաշխավորի հերթագրված հիվանդների թվաքանակի, ընթացիկ հերթագրման ժամկետների, հերթագրման տեղերի քանակի վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնությունը: Ստեղծել հիվանդների հերթագրման միասնական առցանց համակարգ, որը կընդգրկի պետպատվերով բուժօգնություն մատուցող բոլոր բժշկական կազմակերպությունների հերթագրումների հետ կապված անհրաժեշտ տեղեկատվությունը և հնարավորություն կտա քաղաքացիներին, որևէ բժշկական կազմակերպություն դիմելիս, ընդունարանում պարզել այլ բժշկական կազմակերպությունում որևէ ծառայության գծով հերթագրված անձանց թիվը, հերթագրման ժամկետները, ինչպես նաև հերթագրման տեղերի քանակը՝ ըստ պետպատվերի ծրագրերի: 2. Վերահսկել յուրաքանչյուր բժշկական կազմակերպության պաշտոնական կայքում առողջապահության նախարարի կողմից սահմանված պարտադիր տեղեկատվությունը տեղադրելու վերաբերյալ պահանջի կատարումը, որը վերաբերվում է նաև ախտաբանաանատոմիական բաժանմունքներին: Տեղեկատվության մեջ ներառել նաև ախտորոշիչ հետազոտությունների անցկացնելու մասին տեղեկատվությունը, նշելով ախտորոշիչ հետազոտությունների ցանկը: 3. Մշակել և հրապարակել պետպատվերով բժշկական օգնությունից օգտվողի ուղեցույց, որտեղ ավելի մատչելի ձևով կներկայացվեն ՀՀ կառավարության ՀՀ կառավարության 04.03. 2004թ. Թիվ 318-Ն որոշմամբ և նախարարի հրամաններով կարգավորվող հարցերը:	2018 թվականի հուլիսի 10 2018 թվականի ապրիլի 30 2018 թվականի հուլիսի 30	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա

			<p>4. Առողջապահության նախարարության կողմից հսկողություն սահմանել, բուժհիմնարկների կայքէջերին առաջադրվող պարտադիր պահանջների կատարման նկատմամբ, ներառյալ ախտաբանաանատոմիական ծառայություններ մատուցող կենտրոնների գործունեությունը, սահմանելով պատասխանատվության միջոցներ չկատարողների նկատմամբ:</p> <p>5. Մշակել և առողջապահության նախարարության կայքում, էլ. առողջապահության կայքում տեղադրել բուժծառայություններից օգտվողների հիմնական իրավունքների վերաբերյալ իրազեկման թերթիկ, երը պետք է պարունակի տեղեկատվություն նաև անվճար բուժծառայության կազմակերպման ամբողջ ծավալի, տեսակների, այդ ծառայությունը ստանալու քայլերի, ինչպես նաև բողոքարկման մեխանիզմների վերաբերյալ:</p>	<p>2018 թվականի փետրվարի 10</p> <p>2018 թվականի ապրիլի 30</p>	<p>ՀՀ առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ առողջապահության նախարարություն</p>	<p>չկա</p> <p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p>
9.	<p>Հոգեբուժական ծառայություններ մատուցելու գործընթացում հիվանդների իրավունքների պաշտպանվածության կանոնակարգման ցածր մակարդակ:</p>	<p>Հոգեկան հիվանդների, որպես բուժօգնություն ստացող հատուկ խումբ կազմող շահառուների իրավունքների խախտումները բացառելու, պետության կողմից նախանշված ծառայությունների (սնունդ, դեղորայք, խնամք, բուժում և այլն) ամբողջ ծավալով մատուցումը երաշխավորելու համար անհրաժեշտ են առանձնահատուկ կարգավորումներ: Ինդիքը կայանում է նման ծառայությունների կարիք ունեցող հիվանդների սահմանափակ իրավունակությամբ և/կամ գործունակությամբ կամ դրանց ընդհանրապես բացակայությամբ:</p>	<p>1. «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի վերջնական ընդունում:</p> <p>2. «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքից բխող այլ իրավական ակտերում փոփոխությունների կատարում:</p>	<p>Ընդունվել է առաջին ընթերցմամբ</p> <p>Օրենքի ընդունում ից հետո 6 ամիս</p>	<p>ՀՀ առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ առողջապահության նախարարություն</p>	<p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p>
10	<p>ՀՀ օրենսդրությամբ «Բժշկական սխալ» հասկացության</p>	<p>«Բժշկական սխալ»-ը կարող է մեկնաբանվել տարբեր</p>	<p>1. Բժշկական ՍԽԱԼ և ՀԱՆՑԱՆՔ հասկացությունների հստակեցման և տարանջատման նպատակով միջազգային փորձի ուսումնասիրություն առնվազն ութ երկրում, որից</p>	<p>2018թ. նոյեմբերի</p>	<p>ՀՀ Առողջապ</p>	<p>Լրացուցիչ</p>

	բացակայություն:	ձևերով և ունի տարբեր երանգներ: Բժշկի մասնագիտությունում, ինչպես ամեն մի մասնագիտություն, գերծ չէ սխալներից: Սակայն այս դեպքում պետք է հաշվի առնել, որ այս մասնագիտության տեր մարդիկ գործ ունեն մարդու կյանքի և առողջության հետ: Ուստի կարևոր է սխալների ճիշտ ձևակերպումն ու դրա փոխհատուցման ճիշտ մեխանիզմների առկայությունը: «Բժշկական սխալի» և հանցանքի միջև տարբերությունը պետք է լինի օրենսդրորեն կարգավորված և առանց երկակի մեկնաբանությունների:	առնվազն չորսը ԵՄ երկրներից: Համապատասխան առաջարկներով զեկույցի ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ:	10	ահության նախարարություն.	Ֆինանսավորման կարիք չկա
			2. Ուսումնասիրել բժիշկների մասնագիտական գործունեության ընթացքում առաջացող ռիսկերի ապահովագրության միջազգային փորձը առնվազն ութ երկրում, որից առնվազն չորսը ԵՄ երկրներից: ՀՀ ԿԲ-ի հետ համատեղ քննարկել դրա կիրառելի լինելը Հայաստանի Հանրապետության պայմաններում, ինչպես նաև ֆինանսատնտեսական ազդեցությունը համակարգի, այդ թվում նաև բժիշկների եկամուտերի և ծախսերի վրա: Զեկույցի ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ:	2018 թվականի նոյեմբերի 30	ՀՀ Առողջապահության նախարարություն	Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա
11	Պետական մասնակցությամբ բուժփինանսների գործադիր մարմինների կողմից կամայական որոշմամբ կադրեր ընտրելու հնարավորություն:	1. 100 տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահության ոլորտի բաժնետիրական ընկերությունների կադրերի ընտրության գործընթացը կարգավորվում է ՀՀ կառավարության որոշմամբ: Սակայն փաստացի որոշումը չի իրականացվում տարբեր պատճառներով: Ստացվում է, որ կամ պետության կողմից սահմանված կարգավորումները անտեսվում են միտումնավոր կամ այն կիրառելն օբյեկտիվորեն հնարավոր չէ, ինչն առավել քան անթույլատրելի է:	1.Վերանայել և վերլուծել գործող որոշումը: ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել 100 տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահության ոլորտի բաժնետիրական ընկերություններում բժշկական անձնակազմի ընտրության (նշանակման) միասնական և վերահսկելի համակարգի ներդրման վերաբերյալ առաջարկություններ:	2018 թվականի մարտի 30	ՀՀ Առողջապահության նախարարություն	Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա
12	Բուժճառայության որակի գնահատման մեխանիզմների անկատարություն կամ	Բուժճառայության որակի գնահատման մեխանիզմների բացակայությունը կամ ոչ	1.Բժշկական օգնության մշտադիտարկման, որակի կառավարման համակարգերի ներդրում և զարգացում այդ թվում՝ ԱԱՊ-ի և հիվանդանոցային ծառայությունների որակական ցուցանիշների, ազգային մակարդակում ծառայությունների գնահատման	2018 դեկտեմբերի 25	ՀՀ Առողջապահության	Լրացուցիչ ֆինանս

	<p>բացակայություն:</p>	<p>կատարյալ լինելը բերում է մի շարք կոռուպցիոն դրսևորումների: Հարկավոր է, որպեսզի բուժօգնության ծառայության որակի նկատմամբ լինեն ինչպես ներքին հսկողական մեխանիզմներ, այնպես էլ ազգային մակարդակում ծառայությունների գնահատման որակական և քանակական ցուցանիշներ: Խնդրահարույց է այն մոտեցումը, որ ինչպես թերի բուժման, այնպես էլ անփոփոխ ելքով բուժման դեպքերում ֆինանսական փոխհատուցումը կատարվում է ընդհանուր սկզբունքներով՝ առանց հաշվի առնելու որակական տարբերությունը:</p>	<p>որակական և քանակական ցուցանիշների ներդրում՝ ՀՀ առողջապահության նախարարի հրամանի ընդունում, պետական պատվերի տեղադրման պայմանագրի փոփոխության իրականացում:</p> <p>2. Կատարելագործել մատուցվող բժշկական օգնության և ծառայությունների որակի նկատմամբ բժշկական կազմակերպությունների ներքին հսկողության համակարգը և սահմանել վերահսկողական գործառնությունները երաշխավորող ընթացակարգեր՝ համապատասխան իրավական ակտի ընդունմամբ, մասնավորապես՝</p> <p>1) Ներդնել բուժօգնության որակի գնահատման և վերահսկման չափորոշիչներ և ցուցանիշներ, որոնք կնպաստեն նշված բնագավառում ներքին կառավարման, այդ թվում՝ որակի հանդեպ ներքին հսկողության արդյունավետության բարձրացմանը: Բժշկական օգնության և ծառայությունների որակի վերահսկողությունը պետք է ներառի՝</p> <p>ա) ժամանակին և արդյունավետ բուժօգնության կազմակերպումը բ) ռեսուրսների արդյունավետ և նպատակային օգտագործումը գ) հիվանդի առողջապահական պահանջմունքների բավարարումը դ) բուժման արդյունավետությունը:</p> <p>2) Հաշվառել բոլոր բողոքներն ու կրկնակի հոսպիտալացումները, կամ հոսպիտալացումից դուրս գրվելուց հետո կրկնակի հոսպիտալացումներն ու 1 ամսվա ընթացքում մահվան դեպքերը: Միևնույն հիվանդին կրկնակի հոսպիտալացման դեպքում նախորդ հիվանդանոցը պարտավոր է հաշվետու լինել և հարկ եղած դեպքում փոխհատուցել նախկին ծախսերը</p> <p>3. Մշակել ԱԱԴԿ-երի և հատկապես ընտանեկան բժիշկների համար կատարողականների նոր ձևեր, ինչպես օրինակ բարդացած դեպքերի ուղեգրում հիվանդանոց, բուժումից հետո մահացածության դեպքեր և այլն:</p> <p>1) որոնցում դրված պահանջները համահունչ լինեն ներկա բժշկագիտության նվաճումներին, ունենան ԱԱԴԿ-երի աշխատանքը ավելի համապարփակ և ճիշտ բնութագրող ցուցիչներ:</p> <p>2) այնպես, որ էլետրոնային առողջապահության ներմուծման հետ, հնարավոր լինի այդ ցուցանիշները վեր հանել՝ գործածելով ճշգրիտ տեխնոլոգիաների հնարավորությունները</p> <p>3) կատարողականները պետք է մատչելի լինեն բնակչությանը, դրված լինեն կայքերում, կարողանան գնահատելի լինել հասարակության և սպասարկվող բնակչության կողմից</p> <p>4. Մշակել շտապ բուժօգնություն իրականացնող անձնակազմի աշխատանքի որակի գնահատման արդյունավետ համակարգ, որն այլ ցուցանիշներից բացի պետք է ներառի.</p> <p>1) տարեկան քանի մահվան դեպք է գրանցվում բրիգադաների ժամանման դեպքում: (վերլուծել, թե արդյոք դրանք կարելի էր կանխել շուտ ժամանելու դեպքում)</p>	<p>2018 թվականի հուլիսի 20</p> <p>2018 թվականի սեպտեմբերի 15</p> <p>2018 թվականի հունիսի 15</p>	<p>ՀՀ Առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ Առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ Առողջապահության նախարարություն</p>	<p>ավորման կարիք չկա</p> <p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>ՀՀ Առողջապահության նախարարություն</p>
--	------------------------	--	--	---	--	---

			<p>2) բռնության քանի դեպք կա ուշացման պատճառով</p> <p>3) որքան բողոքներ կան ուշացման պատճառով</p> <p>4) քանի 1 օրում կրկնակի կամ եռակի կանչ է գրանցվել վերանայել իրավական և ֆինանսական պատասխանատվության կարգավորման համակարգը:</p>		ուփյուն	Նախարարություն
13	Ախտորոշման կայացման օրենսդրական կարգավորումների բացակայություն:	<p>Ամենավտանգավոր կոռուպցիոն դիսկերից է կեղծ ախտորոշումներ կայացնելը: Սրանք մոլորիպիկատոր ազդեցություն ունեն: Չնայած առաջարկված չեզոքացման միջոցառումներին, ինչպիսիք են.</p> <p>1) Երկրորդ կարծիքի ներդրումը</p> <p>2) Հանձնաժողովների կազմի գաղտնիության պահպանումը:</p> <p>3) Էլեկտրոնային առողջապահության ներմուծմամբ նաև հիվանդի նախնական ողջ անամնեզի առկայությունը</p> <p>4) Գործատուների կողմից իրենց վստահելի մասնագետների կարծիքի հարցումը:</p> <p>Այնուամենայնիվ դեռ արդյունավետ պայքարի միջոցներ չեն հայտնաբերվել:</p>	<p>1. Էլեկտրոնային առողջապահական համակարգի ներդրման շարունակում՝ տվյալների մուտքագրման ընթացակարգի հաստատում ՀՀ առողջապահության նախարարի հրամանով:</p> <p>1. Կլինիկական ուղեցույցերի և պացիենտի վարման գործելակարգերի ներդրում, մասնավորապես , թարգմանում, մշակում, տեղայնացում և ներդրում շուրջ 202 ուղեցույց, 225 գործելակարգ և 134 ընթացակարգ:</p>	<p>2018 թվականի փետրվարի 10</p> <p>2018 թ. դեկտեմբերի 10</p>	<p>ՀՀ Առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ Առողջապահության նախարարություն</p>	<p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p>
	Բուժհաստատությունների լիցենզավորման գործընթացի վերանայման անհարժեշտություն:	Բուժհաստատությունների գործունեության լիցենզիատալու հետ կապված կոռուպցիոն դիսկերի	1. Նախարարության կայքէջում ստեղծել լիցենզավորման հայտ ընդունելու համար հատուկ էլեկտրոնային դիմումաձևերի հնարավորություն և համակարգ, ինչպես նաև կենտրոնացված ձևաչափերի շտեմարան՝ ցանկացած ձևաթուղթ ներբեռնելու հնարավորությամբ: Կից տեղադրել լիցենզավորման հայտ ներկայացնելու մշակված	2018 թվականի դեկտեմբերի 30	ՀՀ Առողջապահության նախարար	Լրացուցիչ ֆինանս

		<p>կապված են գործընթացի ոչ կատարյալ լինելու հետ Օրինակ https://www.e-gov.am/licenses/ կայքում առկա էլեկտրոնային հայտերի ընդունման ձևաչափը և կարգը ընդհանուր առումներով է նկարագրում լրացման և ներկայացման գործընթացը բոլոր բնագավառների համար, իսկ հատկապես առողջապահության բնագավառի տարբեր ոլորտների (ղեղերի արտադրության, դեղատնային գործունեության, կազմակերպությունների կամ ասնհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացում, գենետիկ ինժեներիայի գործունեություն) համար ուղեցույց (guide) բացակայում է: Բոլոր բուժօգնությունների համար, գործունեության լիցենզիա ստանալու համար ՀՀՇՆ-ն (ՄՆԻՊ)-ը սահմանում է նորմեր, որոնք վերաբերվում են ինչպես բուժօգնության տարբեր ենթակառուցվածքներին, այնպես էլ հիվանդասենյակներին⁵,</p>	<p>ուղեցույց, որը դրված կլինի կայքէջում, և որում մանրամասն կներկայացվի հայտի ամեն մի տողի լրացման տարբերակները: Էլեկտրոնային ձևաչափը լրացնելուց հետո, համակարգը ինքը պետք է ավտոմատ ձևով հաստատի լիցենզավորման հայտի ընդունման փաստը, դրանով իսկ մինիմումի հասցնելով մարդկային գործունը:</p> <p>2. Լիցենզավորման հետ կապված ողջ տեղեկատվությունը վերանայել, թարմացնել և կայքէջում տեղակայել մեկ տեսանելի ու մատչելի տեղում: Հայտատուին տրամադրել https://www.e-payments.am/hy/ համակարգով մուծելու համար հաշվի համար և տեղեկացնել հնարավորությունների մասին:</p> <p>3. Վերանայել և փոփոխության ենթարկել ՀՀ կառավարության 29.06.2002թ, N867 որոշման մի շարք կետեր, մասնավորապես</p> <p>1) Իրավական ակտից հանել լիցենզավորման տեղադրման նախապայմանների մեջ առկա ընդհանրական, ոչ հստակ պահանջները, մասնավորապես, Հավելված 5-ի 17 կետի ով նշված նախապայմաններից է ,, Բժշկական սարքավորումների օգտագործման ժամկետը չպետք է գերազանցի լիազոր մարմնի կողմից՝ առանձին բժշկական սարքավորումների համար սահմանված ժամկետները,,: (Թե որ իրավական ակտերի ու պահանջների մասին է խոսքը, ոչինչ չի ասվում:) Հստակեցում մտցնել հրամանի եղած ցանկացած նախապայմանի, մասնավորապես հստակ նշել կարգավորող իրավական փաստաթղթերը՝ Օրինակ՝ ՀՀ առողջապահության նախարարի 28 մարտի 2012 թվականի ,,Բժշկական հիմնական սարքավորումների առավելագույն ժամկետները սահմանելու մասին,, թիվ Օ6-Ն հրաման http://irtek.am/views/act.aspx?aid=65314&m=%27%27&sc=#</p> <p>2) Նույն ձևով Հավելված 5-ի 14 կետը սահմանում է ,, 14. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը պետք է ապահովեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ բժշկական հաստատություններին ներկայացվող կառուցվածքային, մասնագիտական, ինչպես նաև բժշկական սարքավորումներով ապահովվածությանը ներկայացվող պայմաններին և պահանջներին ու շինարարական նորմերին համապատասխանությունը:,, Այնինչ հարկավոր է հստակ նշել ամեն մի իրավական ակտերի ամբողջությունը և կատարել հղումը</p>	<p>2018 թվականի դեկտեմբերի 30</p> <p>2018թ. մայիսի 10</p>	<p>ուպյուն</p> <p>ՀՀ Առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ Առողջապահության նախարարություն</p>	<p>ավորման կարիք չկա</p> <p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p> <p>Լրացուցիչ ֆինանսավորման կարիք չկա</p>
--	--	---	---	---	--	--

⁵ շիվանդասենյակներին առաջարկվող պահանջները կանոնակարգված են «Հասարակական շենքեր և կառուցվածքներ» ՄՆԻՊ N 2.08.02-89 շինարարական նորմեր և կից բուժական կազմակերպությունների նախագծման ձեռնարկ, բաժին 2, հաստատված է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2001 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 82-Ն հրամանով, գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 12.11.2001 թ. Պետական գրանցման թիվ 11701172): (http://minurban.am/lows/files/82_1_10_01.pdf և <http://www.vashdom.ru/snip/20802-89/index-3.htm> կետ. 2.14 և կետ 2.15) ,ինչպես նաև հետևյալն որոշումներով <http://www.arlis.am/documentview.aspx?docid=105396> ; <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=48392>

